ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 օգոստոսի 2023 թվականի N 210 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇՈՑՔ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՇՈՒՌԱ ԱՐԾԱԹՈՎԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԵՎ ԿԱՌԼԵՆ ԳԵՎՈՐԳԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 08-015-0118-0057 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՆՈՐ ՄԻԱՎՈՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդված մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի 2) ենթակետով, 33-րդ, 62-րդ և 64-րդ կետերով և հիմք ընդունելով Շուռա Արծաթովի Կարապետյանին և Կառլեն Գևորգի Կարապետյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 27092021-08-0019 վկայականը, որակավորում ունեցող մասնագետի կողմից տրված հողամասի բաժանման սխեման, հողամասերի հատակագծերը և Շուռա Արծաթովի Կարապետյանի և Կառլեն Գևորգի Կարապետյանի 2023 թվականի օգոստոսի 2-ի Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը, **որոշում եմ.**

1. Քաղաքացիներ Շուռա Արծաթովի Կարապետյանին և Կառլեն Գևորգի Կարապետյան սեփականության իրավունքով պատկանող, 08-015-0118-0057 կադաստրային ծածկագրով հողամասը (վկայական N 27092021-08-0019) վերահասցեավորել և տրամադրել նոր հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, Կրասարի խճուղի, 4-րդ փակուղի, հողամաս 2/7:
2. Չեղյալ համարել նախկինում տրված «Հայաստանի Հանրապետութուն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, Կրասարի խճուղի, 4-րդ փակուղի, 16 հողամաս հասցեն»:
3. Տարանջատել Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, բնակավայր Աշոցք, Կրասարի խճուղի, 4-րդ փակուղի, 2/7 հողամաս հասցեում գտնվող, Շուռա Արծաթովի Կարապետյանին և Կառլեն Գևորգի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասը՝ համաձայն որակավորում ունեցող մասնագետի կողմից տրված հողամասի բաժանման սխեմայի և հողամասերի հատակագծերի:
4. Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, բնակավայր Աշոցք, Կրասարի խճուղի, 4-րդ փակուղի, 2/7 հողամաս հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

1) 0.52850 հեկտար մակերեսով հողամասին (առանձնացվող հատված 1) փոստային հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, բնակավայր Աշոցք, Կրասարի խճուղի, 4-րդ փակուղի, 2/8 հողամաս,

2) 0.25000 հեկտար մակերեսով հողամասին (առանձնացվող հատված 2) փոստային հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Աշոցք համայնք, բնակավայր Աշոցք, Կրասարի խճուղի, 4-րդ փակուղի, 2/7 հողամաս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2023 թվականի օգոստոսի 2
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 օգոստոսի 2023 թվականի N 211 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՍԵՆ ԵՐՋԱՆԻԿԻ ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿՍՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ 40.08 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 33-րդ, 33.1-րդ, 34-րդ, 35-րդ կետերի «դ», ենթակետի, 35.1-րդ, 36-րդ կետերի դրույթներով և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Աշոցք բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող 08-015-0037-0074 կադաստրային ծածկագրով հողատարածքում առկա 0.00408 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա, քաղաքացի Արսեն Երջանիկի Ամիրխանյանի կողմից ինքնակամ կառուցված լողավազանը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով /ՀՕ-397-Ն/ սահմանված օրինականացման պայմաններին, ինքնակամ կառուցված **31.96** քառակուսի մետր ներքին և **40.08** քառակուսի մետր արտաքին մակերեսով լողավազանը ճանաչվել է օրինական, փաստացի տնօրինում, տիրապետում և օգտագործում է քաղաքացի Արսեն Երջանիկի Ամիրխանյանը և այն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 12-ի թիվ 180-Ա որոշմամբ շինությունը ճանաչվել է օրինական, այն համարվել է համայնքի սեփականություն և անշարժ գույի նկատմամբ իրավունքները ենթարկվել են պետական գրանցման (վկայական՝ 02082023-08-0040), **որոշում եմ՝**

1. Քաղաքացի Արսեն Երջանիկի Ամիրխանյանի կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Աշոցք բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 08-015-0037-0074 կադաստրային ծածկագրով հողատարածքում առկա 0.00408 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված, օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված **40.08** քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը (հետագայում՝ շինություն) և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականությունը հանդիսացող 08-015-0037-0074 կադաստրային ծածկագրով հողատարածքում առկա 0.00408 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը (վկայական՝ N 02082023-08-0040, անշարժ գույքի հասցեն՝ մարզ Շիրակ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 4-րդ փողոց, ավտոտնակ 3/12), ուղղակի վաճառքով գնելու նախապատվության իրավունքի մասին գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի՝ Արսեն Երջանիկի

Ամիրխանյանին ((անձնագիր՝ AU 0246066, տրված՝ 27.04.2021թ, 034-ի կողմից, բնակության հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 5-րդ փողոց, շենք 10, բնակարան 12):

2. Օրինական ճանաչված շինության և համապատասխան հողամասի համար սահմանել վաճառքի հետևյալ գներն ու պայմանները՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 35-րդ կետի «դ» ենթակետի համաձայն ինքնակամ կառուցված բնակելի նշանակության շինությունների յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար վաճառքի գինը սահմանվում է բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ հաստատված 19-րդ գոտում ընդգրկված Աշոցք համայնքի, Աշոցք գյուղի համար սահմանված շինության **0.0536** գործակցի կիրառմաբ, վճարի չափը կազմում է՝

40.08 քառակուսի մետր X 10000 Հայաստանի հանրապետության դրամ X 0.0536 = 21480 (քսանմեկ հազար չորս հարյուր քսան) Հայաստանի Հանրապետության դրամ:

2) Բնակելի նշանակության ինքնակամ շինությունների պահպանման և սպասարկման համար նախատեսված բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության մեկ քառակուսի մետր հողամասի կադաստրային արժեքը Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ հաստատված 19-րդ գոտում ընդգրկված Աշոցք համայնքի Աշոցք գյուղի համար սահմանված է **142** Հայաստանի Հանրապետության դրամ, կադաստրային արժեքով օտարվող հողամասի մակերեսը կազմում է **40.08** քառակուսի մետր, որի հաշվարկով հողամասի վաճառքի գինը կազմում է՝

40.08 քառ. մետր X 142 Հայաստանի Հանրապետության դրամ = 5690 (հինգ հազար վեց հարյուր իննսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

3) Սահմանված չափերով ձևավորված կառույցի և հողամասի ուղղակի վաճառքի ընդհանուր գինը կազմում է՝ **27170 (քսանմեկ հազար հարյուր յոթանասուն) Հայաստանի Հանրապետության դրամ,** որը ենթակա է վճարման Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին:

4) Որոշման սույն կետի «3» կետով ձևավորված վաճառքի ընդհանուր գնին հավելվում են տվյալ գույքային միավորի նկատմամբ, մինչև օտարումը, համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա:

5) Ինքնակամ շինությունն իրականացրած անձերի կողմից՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում գնման նախապատվության առաջարկը չընդունվելու կամ գնման նախապատվության առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում օրինականացված կառույցի և դրա համար սահմանված կարգով առանձնացված հողամասի վաճառքի գինը չվճարելու դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է գրավոր առաջարկություն՝ կառույցը վարձակալելու վերաբերյալ:

6) Ինքնակամ կառույցն իրականացրած անձերի կողմից կառույցի վարձակալության իրավունքից ևս հրաժարվելու դեպքում այն վաճառվում կամ օգտագործման է տրամադրվում հրապարակային սակարկություններով՝ աճուրդի կամ մրցույթի ձևով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2023 թվականի օգոստոսի 7
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 օգոստոսի 2023 թվականի N 212 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇՈՑՔ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՀԱԿՈԲ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԵՎ ԳՈՀԱՐ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 08-015-118-019 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով, 50-րդ կետով և հիմք ընդունելով 2023 թվականի օգոստոսի 1-ին Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրված Գոհար Գալստյանի դիմումը, **որոշում եմ**.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Աշոցք գյուղում գտնվող քաղաքացիներ Հակոբ Սարգսյանին և Գոհար Գալստյանին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, գյուղ Աշոցք, Կրասարի խճուղի, հողամաս 32/2, հասցեում գտնվող, 08-015-118-019 կադաստրային ծածկագրով հողամասը /գրանցված՝ 2005 թվականի հուլիսի 29-ին, վկայական N 1138388/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, Կրասարի խճուղի, հողամաս 32/2:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2023 թվականի օգոստոսի 7
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 օգոստոսի 2023 թվականի N 213 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԱՊԱՏ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻ ՄԻՍԱԿ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ ԵՎ ՍԵԴԱ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 08-104-016-010-1 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով, 50-րդ կետով և հիմք ընդունելով 2023 թվականի օգոստոսի 3-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրված Միսակ Զաքարյանի դիմումը, **որոշում եմ**.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք Համայնքի Սարապատ գյուղում գտնվող քաղաքացի Միսակ Զաքարյանին և Սեդա Զաքարյանին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Սարապատ համայնք, գյուղ Սարապատ , 1-ին փողոց, բնակելի տուն 13, հասցեում գտնվող, 08-104-016-010-1 կադաստրային ծածկագրով բնակելի տանը /գրանցված՝ 2003 թվականի սեպտեմբերի 12-ին, վկայական N 1134784/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Սարապատ, 1-ին փողոց,բնակելի տուն 13:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2023 թվականի օգոստոսի 7
գյուղ Աշոցք